№ 9 (13)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

2022

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

9 (13)

ԵՐԵՎԱՆ 2022
ЕРЕВАН 2022
YEREVAN 2022

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №9 (13). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2022. – 266 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

ТВОРЧЕСТВО КАК СРЕДСТВО ОТРАЖЕНИЯ ДУХОВНОГО РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ

Армен Самвелович Аветисян
avet1syan.armen@inbox.ru

Аспирант кафедры прикладной психологии,
Армянский государственный педагогический
университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Творчество, имея многослойные проявления, занимает особое место в жизни каждого человека, являясь средством отражения его духовного развития. Творя, человек проявляет свои способности, выражает уникальные мысли, идеи, эмоции, чувства, выражая свою индивидуальность. Творчество есть не что иное, как состояние души, поэтому внутренний мир художника отражается через цвет и образы, и чем сильнее его эмоциональное состояние, тем больше он расскажет о себе через созданное им произведение. Творчество человека – это душа, которую он вкладывается в свою работу, творчество вдохновляет человека и благодаря этому процессу создаются и отражаются в нем человеческие души.

Ключевые слова: творчество, искусство, психология, психическая структура, психическое состояние, человек, индивидуальность, личность, отражение, средства.

Գաղտնիք չէ, որ ստեղծագործությունը հոգեբանական երեւույթ է, որը դրսևորվում է անհատական, խմբային, հավաքական, ազգային և հա-

մաշխարհային մակարդակներում: *Մարդկային քաղաքակրթության զարգացման բոլոր փուլերում արձանագրված ինչպես առաջընթացի, այնպես էլ շեղ /դեվիանտ/ և սահմանային /մարգինալ/ իրավիճակների հենքն է հանդիսացել ստեղծարար գաղափարը:* Ստեղծագործության մեջ դրսևորվում են ստեղծագործողի դրական կամ բացասական բնութագրիչները, ուստի կարելի է այն դիտարկել, որպես անձի հոգեկերտվածքի արտացոլման միջոց:

Ըստ Պ. Վերնոնի (1989) «*Ստեղծագործականությունը մարդու՝ նոր և ինքնատիպ այնպիսի գաղափարներ առաջարկելու, հայտնագործություններ անելու և գեղարվեստական օբյեկտներ ստեղծելու ունակությունն է, որոնք փորձագետներն ընդունում են որպես գիտության, տեխնոլոգիայի կամ արվեստի ոլորտում արժեքավոր տարրեր*» [11]:

Հիմնվելով այս սահմանմանը, փորձենք առավել հստակ բնորոշել ստեղծագործությունը, որպես անձի հոգեկերտվածքի արտացոլման միջոցի, կապելով այն ստեղծագործականության հետ: Ստեղծագործականությունը՝ մտավոր համալիր և ամբողջական գործընթացներ իրականացնելու հատկանիշ է, որի առկայության արդյունքում անձը ստեղծում է նեղ իմաստով՝ չկրկնվող գաղափարներ, իսկ լայն իմաստով՝ ազգային և համամարդկային արժեքներ: Անձի ստեղծագործականության և այն բնորոշող հոգեկան գործընթացներն ուսումնասիրվում են ճանաչողական հոգեբանության բնագավառում, կարևորելով ստեղծագործ մարդու կողմից իրականացվող ճանաչողական այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ երևակայությունը, ներհայեցողությունը, ներշնչանքն ու աշխարհընկալումը: Այս առումով հատկանշական են Ջ. Ուոլլասի (1926) և Մ. Մամֆորդի տեսությունները (1991, 1997) [12, 6, 7]:

Անձի ստեղծագործականության արգասիքը՝ ստեղծագործությունն է, այսինքն այն արտադրանքը, որն ընկալվում է որպես արվեստի գործ, գիտական հայտնագործություն կամ տեխնոլոգիական գյուտ: Ընդհանրապես, ստեղծագործական արտադրանքն անկրկնելի է /օրիգինալ/, նրա-

նում մեկտեղվում են՝ հեռանկարը, նորույթը, բարդությունը գեղեցկությունը, ճշմարտացիությունն ու հավերժականությունը (M. Runco, 1996, 2003) [10, 9]:

Հետրելով հայտնի հետազոտող Ռունոյի կարծիքին, կարող ենք փաստել, որ ստեղծագործականությունը հասկացվում է որպես անձի անհատական բնութագիր, կամ հետազոտական հատկանիշ: Սակայն առավելապես կիսում ենք քսաներորդ դարի մեկ այլ գիտնական հետազոտող Բարրոնի կարծիքը, ըստ որի ստեղծագործականությունն անհատական կարողություն է, իսկ որոշ դեպքերում օժտվածություն կամ տաղանդ (Barron, 1969) [1]:

Դիֆերենցիալ հոգեբանության ուսումնասիրման օբյեկտներից մեկը՝ ստեղծագործությունն է և այն ուսումնասիրելիս, ժամանակակից հետազոտողների կողմից բացահայտվել են բազմաթիվ հատկություններ, որոնք, համահունչ են ստեղծագործ մարդկանց ստեղծագործականության հետ: Արդի ժամանակահատվածում անձի ստեղծագործականությունն ընկալվում է որպես ստեղծագործական վարքի վրա ներգործող հզոր խթան (Feist and Barron, 2003) [5]:

Այսպիսով, այն հարցին, թե ի՞նչ է ստեղծագործականությունը, կստանանք մի քանի պատասխան՝

- անձի ստեղծած արտադրանքը,
- նրա կողմից իրականացվող ստեղծագործական գործընթացը,
- այդ գործընթացում դրսևորվող վարքագիծը,
- անհատի համոզմունքը, դիրքորոշումը, երևակայությունը, ներհայեցողությունը, ներշնչանքը, ներուժը, կարողությունը, օժտվածությունն ու տաղանդը:

Ակնհայտ է, որ ստեղծագործությունը, անձի հոգեկերտվածքի արտացոլման միջոց է, քանզի ստեղծագործականությունը, որը դրսևորվում է ստեղծագործելու ընթացքում, ներառում է անձին բնորոշ հոգեկան գրեթե բոլոր գործընթացները: Հետեւաբար, կարելի է ասել, որ ստեղծագործու-

թյան վերաբերյալ արձագանքներով բնորոշվում է ոչ միայն ստեղծագործությունն այլ նաև ստեղծագործողը: ՈՒստի նման մոտեցման պարագայում ստեղծագործությունը կարելի է համարել «մեծություն», որով բնութագրվում է անձի ստեղծագործականության մակարդակը:

Առաջինը, *աշխարհիկ ստեղծագործականությունն է*, որը ենթադրում է ամենօրյա անհատական ստեղծագործ վարքի դրսևորում, ինչի հետևանքով ստացված արդյունքի կիրառմամբ լուծվում են մեր առօրյա խնդիրները: Ստեղծագործականության այս մակարդակը Ռիչարդսը համարում է մարդու բնույթի մի մաս, որը ծառայեցվում է հենց իրեն կամ նրա սերտ միջավայրին, սակայն հասարակական լայն շրջանակներում որևե նշանակալի արժեք չի հանդիսանում և լայն ճանաչում չի վայելում (Richards, 2007) [8]:

Քրոփլերն այն կարծիքին է, որ այն անձն, ով գտնվում է ստեղծագործականության առաջին մակարդակում, աշխատանքում և կենցաղում դրսևորում է առավելապես հետազոտական ընդգծված կարողություններ և ընդունակություններ (Cropley, 2011) [4: 358–369]:

Անձի *ստեղծագործականության երկրորդ մակարդակը* կապված է այս կամ այն ոլորտի ականավոր անհատների և նրանց ստեղծագործությունների հետ, գիտության և արվեստի այն կերպարների, ովքեր ցուցաբերում են բարձր կատարողականություն, օժտվածություն և տաղանդ, փոխակերպելով աշխարհն ու օբյեկտիվ իրականությունը, օրինակ՝ դա Վինչի, Ռեմբռանտ, Ռաֆայել, Մոնե, Դալի, Մալևիչ, Սարյան, Մինաս, Մոցարտ, Բեթհովեն, Տիգրանյան, Կոմիտաս, Խաչատուրյան և այլք:

Ստեղծագործականության այս երկու մակարդակների սահմանումը սակայն հանգեցրել է երկփեղկ դասակարգման և ստեղծագործողի հոգեկերտվածքի արտացոլման որոշակի սահմանափակումների: Ուստի, հաշվի առնելով սույն հանգամանքը Beghetto-ն և Kaufman-ը (2009) առաջարկում են ներառել երկու նոր կատեգորիաներ՝ Mini-c և Pro-c [2: 296-324]:

Ըստ հեղինակների Mini-c մակարդակն ամենա ամենաասուբյեկտիվն է: Այն վերաբերում է անմիջապես անհատին, նրա ձեռք բերած նոր գիտելիքներին և ստեղծագործության միջոցով, անձնական փորձի դրսևորմամբ իր հոգեկերտվածքի արտացոլմանը: Pro-c մակարդակը ներկայացնում է շարժընթաց զարգացման և ջանքերի մի մակարդակ, որը սկսվում է Little-c-ից և համապատասխանում է որոշակի մասնագիտական ոլորտում փորձի հետ կապված ստեղծագործականությանը, սակայն ոչ բոլոր փորձառու մասնագետներն են հասնում ստեղծագործականության այս մակարդակին: Pro-c մակարդակ դրսևորելու համար անձին հարկավոր է պատրաստել կոկտեյլ, որի մեջ կմեկտեղվեն նրա հոգեկան բոլոր գործընթացներն ու կարտացոլվի հոգեկերտվածքը: Անձի ստեղծագործականության երևույթը, նրա բարդ հոգեբանական բնույթը պատկերացնելու Քոենը (2011) առաջարկում է իր «հարմարվողական ստեղծագործական վարքագծի շարունակությունը» [3: 9–17]:

Նա, հարմարվողականության տեսանկյունից մարդու ստեղծագործականությունը վերլուծելիս, էական է համարում անձի և շրջակա միջավայրի միջև փոխգործակցությունը: Այդ փոխգործակցության շարունակականությունն ու շարժընթացությունը, ըստ հեղինակի տատանվում է՝ օժտված մանկահասակ երեխաների ստեղծագործականությունից, մինչև հայտնի, կարկառուն, տաղանդավոր մեծահասակներ: Ընդ որում, ստեղծագործ անձը, կյանքի տարբեր փուլերում, իր ստեղծածի մեջ արտացոլում է իր հոգեկերտվածքը, որն իր հերթին պարունակում է տարբեր ազդեցիկ փոփոխականներ և մարդու ստեղծագործականության մակարդի բարձրացմանը նպաստող բազմաթիվ տարրեր: Այս ամենը գալիս է վկայելու, որ ստեղծագործությունն անձի հոգեկերտվածքի արտացոլման միջոց է:

ЛИТЕРАТУРА

1. *Barron F.* Creative person and creative process. – New York, Holt, Rinehart and

Winston, 1969. – PP. 195–208.
2. *Beghetto R.A. & Kaufman J.C.* Intellectual estuaries. Combining learning and creativity in the programs of advanced academics. Journal of Progressive Academics, 2009. Vol. 20. – PP. 296–324.
3. *Cohen L.M.* Adaptation, adaptability and creative ability. In M.A. Runco & In S.R. Pritzker (ed.), Encyclopedia of Works (2nd ed.). – London: Elsever, 2011. – PP. 9–17.
4. *Cropley A.J.* Definitions of work. In the encyclopedia of works. – London: Elsevier, 2011. – PP. 358–369.
5. *Feist G.J. & Barron F.X.* Predict creativity from an early age to adulthood. Intellect, potential and personality. Journal of Individual Research, 2003. Vol. 37, Is. 2. – PP. 62–88.
6. *Mumford M.D., Supinski E.P., Baughman W.A., Costanza D.P. & Threlfall K.V.* Events based on the process of creative problem-solving skills: V. Overall Prediction. Journal of Creative Research, 1997. Vol. 10, Issue 1. – PP. 73–85.
7. *Mumford M.D., Mobley M.I., Uhlman C.E., Reiter-Palmon R. & Doares L.M.* Develop analytical models of creative abilities. Journal of Creative Research, 1991. Vol. 4, Issue 2. – PP. 91–122.
8. *Richards R.* Everyday creativity new views of human nature. Psychological, social and caring perspectives. American Psychological Association. Washington. 2007.
9. *Runco M.A.* Education for creative potential. Journal of Scandinavian Education, 2003. Vol. 47, Issue 3. – PP. 317–324.
10. *Runco M.A.* Individual creativity. Definition & Development issues. New directions of child development, Vol. 1996, Issue 72. – PP. 3–30.
11. *Vernon P.* The problem of nature education in creativity. In J.A. Glober, R.R. Ronning and C.R. Reynols (ed.), Handbook of Creation. New York in the plenum, 1989. – PP. 93–110.
12. *Wallas G.* Art of thought. New York. Harcourt Brace & the world, 1926. – 130 p.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ԱՐՏԱՅՈԼՄԱՆ ՄԻՋՈՑ

Ա.Ս. Ավետիսյան
avet1syan.armen@inbox.ru

Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի
Կիրառական հոգեբանության ամբիոնի ասպիրանտ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Ստեղծագործությունն առանձնահատուկ տեղ է գրավում յուրաքանչյուր մարդու կյանքում, քանի որ նրա դրսևորումները բազմաշերտ են և այն անձի հոգեկերտվածքի արտացոլման միջոց է: Մարդը ստեղծագործելով ի ցույց է դնում իր կարողությունները, արտահայտում ինքնատիպ մտքեր և գաղափարներ, հույզեր և զգացմունքներ, դրսևորելով իր անհատականությունը: Ստեղծագործությունը ոչ այլ ինչ է, քան հոգևիճակ, ուստի նկարիչն իր ներաշխարհին արտահայտում է գունազգացողությամբ և պատկերներով, և որքան ուժգին է նրա հուզական վիճակը ստեղծագործելու պահին, այնքան շատ նա կպատմի իր մասին ստեղծագործության միջոցով: Անձի ստեղծագործականությունն, այն հոգին է, որը դրվում է նրա ստեղծագործության մեջ, իսկ ստեղծագործությունը ոգեշնչում է, որի միջոցով կերտվում և արտացոլվում են մարդկային հոգիները:

Բանալի բառեր՝ ստեղծագործություն, ստեղծագործականություն, արվեստ, հոգեբանություն, հոգեկերտվածք, հոգեվիճակ, անձ, անհատ, անհատականություն, արտացոլում, միջոց:

CREATION AS A MEANING OF PERSONAL PSYCHOLOGY

A. Avetisyan
avet1syan.armen@inbox.ru

Postgraduate student at the Department of Applied Psychology,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The work occupies a special place in the life of every person, because its manifestations are multi-layered, it is a means of reflecting the psyche of the person. By creating, a person shows his abilities, expresses unique thoughts, ideas, emotions, feelings, expressing his individuality. The work is nothing but a state of mind, so the artist expresses his inner world with color, and images, and the stronger his emotional state at the time of creation, the more he will tell about himself through the work. The creativity of a person is the soul that is put into his work, and the work inspires, through which human souls are created and reflected.

Keywords: Creation, creativity, art, psychology, mental structure, mental state, person, individual, personality, reflection, means.

Информация о статье:
статья поступила в редакцию 28 марта 2022 г.,
подписана к печати в номер 9 (13) / 2022 – 03.05.2022 г.